

# Հիսուսը մեզ մխիթարություն խոստացավ

Հիսուս Քրիստոսը գիտեր, որ Իր աշակերտները մխիթարության կարիք կունենան Իր մահից հետո: Ուստի Նա ուսուցանեց նրանց Սուրբ Հոգու մասին: Նա խոստացավ, որ Սուրբ Հոգին կմխիթարի նրանց և միշտ նրանց հետ կլինի: Սուրբ Հոգու անունը Մխիթարիչ է: Երբ մենք տխուր ենք կամ վախեցած, Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ հիշել Հիսուս Քրիստոսի սերը: ●

**Այս պատմությունը կարող եք կարդալ Հովհաննես 14.1, 16-18, 26-ում:**



Ես, մայրս և հայրս վերմակներ տվեցինք մանկական հիվանդանոցին: Հիվանդանոցի աշխատակիցներն ասացին, որ վերմակները կօգնեն երեխաներին այլևս չվախենալ: Ուրախ եմ, որ մեր վերմակները կօգնեն աշխուժացնել երեխաներին և ուրախացնել նրանց: Ես նույնպես ուրախացա:

**Բրուքլին Դ., 9 տարեկան, Տեխաս, ԱՄՆ**

## ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՄԽԻԹԱՐԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

- Ո՞վ ունի մխիթարության կարիք:
- Աղոթեք և ծրագիր կազմեք՝ նրան օգնելու համար:
- Հետևե՛ք ձեր ծրագրին:



**Կտրեք հանեք այս քարտը, որը կհիշեցնի ձեզ շարունակել օգնել Հիսուսի օրինակով:**

**Ինչպե՞ս եք փորձում Հիսուսի օրինակով օգնել ուրիշներին: Գրեք և պատմեք մեզ:**

ՆԿԱՐԸ՝ ՏԻՋԻՆԱ ԼՈՆԳՈՅԻ